Աջակցություն Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությանը
Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Բիզնես վիճակագրություն

Գործունեություն Բ.4.2
Սեմինար վերապատրաստում

Առաքելությունը իրականացրել են

Աշու Քոնրադ, ավագ խորհրդատու
Վիբեկե Սկով Մյուլլեր, գլխավոր խորհրդատու

Հայաստան, սեպտեմբերի 3 – 7, 2012

Վերջնական Տարբերակ

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Դանիայի վիճակագրություն

Հեղինակների անունները, հասցեները, էլ.փոստի հասցեն

Աշու Քոնրադ, ավագ խորհրդատու
Դանիայի վիճակագրություն, տվյալների հավաքագրման և մեթոդաբանության բաժին
Sejrøgade 11
ԴԿ-2100 Կոպենհագեն Ø
smc@dst.dk

Վիբեկե Սկով Մյուլլեր
Դանիայի Վիճակագրություն, Բիզնես Ռեգիստրի բաժին
Sejrøgade 11
ԴԿ -2100 Կոպենհագեն Ø
vsm@dst.dk

Բովանդակությունների ցանկ

0. Ամփոփ նկարագիր .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
1. Ընդհանուր մեկնաբանություններ .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
2. Գնահատում և արդյունքներ 6
2.1. Հաշվետվական ձևեր .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
2.2. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 7
2.3. Բիզնես ռեգիստր 8
3. Եզրակացություններ և առաջարկություններ 11
3.1 Հաշվետվական ձևեր 11
3.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 12
3.3 Բիզնես ռեգիստր 13
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող գործողություններ (Բ.6) 15
4.1 Հաշվետվական ձևեր 15
4.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 16
4.3Բիզնես ռեգիստր 16
Annex 1. Տեխնիկական առաջադրանք 17
Annex 2. Առաքելության ծրագիրը սեպտեմբերի 3-7, 2012.....19
Annex 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել 21
Annex 4: ԲՌՀ նախագծի օրինակը հարց 9 22
Annex 5: Գոհունակության ինդեքսի հաշվարկ.....23
Annex 6: ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական բիզնես ռեգիստրի ռազմավարություն 25

Այլ հավելվածներ, որոնք հավաքվել կամ կազմվել են սույն զեկույցի համար

Հավելված Բ4.2.7 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում (PowerPoint)
Հավելված Բ4.2.8 Բիզնես ռեգիստրի շնորհանդես (PowerPoint)

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ՎԲՌ	Վիճակագրական բիզնես ռեգիստր
ԿԲՀ	Կառուցվածքային բիզնես հետազոտություն
ՍԾՄ	Ստանդարտ ծախսերի մոդել
ԴՎ	Դանիայի վիճակագրություն
ՀՀ ՊԵԿ	ՀՀ Պետական եկամուտների կոմիտե

0. Ամփոփ նկարագիր

Բաղադրիչ Բ ներառում է հետևյալ նպատակները՝1) ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության որոշում և քանակապես սահմանում, 2) բիզնես հետազոտության հաշվետվական ձևերի բարելավում, 3) ՎԲՌ-ի վերակազմակերպման համար ռազմավարության սահմանում և ընդունում՝ առավել լավ ընդգրկմամբ և արդիականությամբ:

Սույն առաքելությունը բաղադրիչ Բ-ի շրջանակներում իրականացվող թվով 7 –րդ առաքելությունն էր: Սույն գործունեության հիմնական նպատակները հետևյալն էին՝

- Շարունակել Բ4.1 գործունեության ընթացքում նախաձեռնված գործընթացը ՀՀ ԱՎԾ Վիճակագրական բիզնես ռեգիստրի զարգացման ռազմավարության համար;
- Որոշել արտաքին կախվածության աստիճանը և հետևանքները կապված ՎԲՌ-ի ռազմավարության հետ և հնարավոր այլընտրանքները;
- Շարունակել Բ4.1 –ի գործընթացը՝ հաշվետվական ձևերի վերակազմակերպման, վերանախագծման և փորձարկման վերաբերյալ;
- Գնահատել և զարգացնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման մեթոդը

Հետևելով Բ4.1 գործունեությանը՝ սույն գործունեության նպատակն է շարունակել համապատասխան աշխատակիցների վերապատրաստումը հաշվետվական ձևերի վերակազմակերպման հարցերի և ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրության բիզնես ռեգիստրի վերաբերյալ:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ բավականին լավ արդյունքներ են ձեռք բերվել հաշվետվական ձևերի վերանախագծման առումով: Սա հանգեցրել է ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության զգալի կրճատմանը:

ԱՊ փորձագետներն առաջարկում են ՀՀ ԱՎԾ-ին հաշվարկել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցումը՝ հիմնվելով բազիսային չափման վրա: Պետք է մշակվի պլան ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետագա նվազեցման համար՝ առաջնահերթություններ տալով առավել ծախսատար հետազոտություններին և աշխատելով հաշվետվական ձևերի հետագա բարելավման և ընտրանքի նվազեցման վրա:

Ինչ վերաբերվում է բիզնես ռեգիստրին, ապա կապը արտաքին շահառուների հետ շարունակվել է Բ.4.1 առաքելությունից ի վեր և գրանցվել է որոշակի առաջընթաց:

ԱՊ փորձագետները համարում են, որ ՀՀ ԱՎԾ-ի համար կարևորագույն մարտահրավերներից է հանդիսանում վարչական ռեգիստրներից ճիշտ և համապարփակ տվյալների տրամադրումը: Այդ իսկ պատճառով ԱՊ փորձագետներն առաջարկում են, որ ՀՀ ԱՎԾ-ն աշխատի ֆորումի կազմակերպման ուղղությամբ (ի վերջո աշխատանքային խմբի տեսքով), որի նպատակն է լինելու իրավաբանական միավորների վերաբերյալ հիմնական տեղեկատվության որակի բարելավումը:

Հաջորդ գործունեությունը (Բ.6) տեղի կունենա 2012 թ. Նոյեմբերի 26-30-ը, և ՀՀ ԱՎԾ-ի կողմից պետք է իրականացվեն մի շարք հետևողական գործողություններ՝ նշված գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար:

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է <<**Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով**>> ծրագրի շրջանակներում: Այս ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՎԾ –ն նպատակ է հետապնդում նվազեցնել հաշվետվությունների ծանրաբեռնվածությունը որպես բաղադրիչ Բ-ի ընդհանուր նպատակ՝ *բիզնես ռեգիստր, կառուցվածքային բիզնես հետազոտություններ և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն*: Սա ենթադրում է մի շարք նպատակներ՝

- Որոշել և քանակապես սահմանել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը
- Բարելավել բիզնես հետազոտությունների հաշվետվական ձևերը
- Սահմանել և ընդունել ռազմավարություն ՎԲՌ-ի վերակազմավորման համար՝ առավել լավ ընդգրկմամբ և արդիականությամբ՝ հիմնականում հիմնված լինելով վարչական ռեգիստրների տվյալների վրա:

Սույն գործունեությունը բաղադրիչ Բ-ի շրջանակներում իրականացված թվով յոթերորդ առաքելությունն էր՝ <<վերապատրաստման սեմինար>>: Հետևելով Բ 4.1 գործունեությանը, այս գործունեության նպատակն էր շարունակել համապատասխան աշխատակիցների վերապատրաստումը ՀՀ ԱՎԾ-ի հաշվետվական ձևերի վերակազմավորման և վիճակագրական բիզնես ռեգիստրի հարցերում:

Սույն առաքելության կոնկրետ նպատակները/ակնկալվող արդյունքները հետևյալն էին, տես հավելվածը

- Շարունակել Բ 4.1 առաքելության ընթացում նախաձեռնված գործընթացը, որը վերաբերվում էր ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական բիզնես ռեգիստրի զարգացման ռազմավարությանը;
- Որոշել արտաքին կախվածության աստիճանը և հետևանքները կապված ՎԲՌ-ի ռազմավարության հետ և հնարավոր այլընտրանքները;
- Շարունակել Բ4.1 –ի գործընթացը հաշվետվական ձևերի վերակազմակերպման, վերանախագծման և փորձարկման վերաբերյալ;
- Գնահատել և զարգացնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման մեթոդը

ԱՊ փորձագետները ցանկանում են արտահայտել իրենց խորին երախտագիտությունը այն բոլոր պաշտոնյաներին և անձանց, որոնց հետ իրենք հանդիպումներ են ունեցել՝ վերջիններիս ցուցաբերած հյուրընկալության և ակտիվ աջակցության համար, ինչպես նաև այն արժեքավոր տեղեկությունների համար, որը տրամադրվեց փորձագետներին Հայաստանում գտնվելու ընթացքում և մեծապես նպաստեց նրանց աշխատանքներին:

Սույն զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը ԵՄ-ի, ՀՀ ԱՎԾ-ի կամ ԴՎ տեսակետների հետ բոլորովին պարտադիր չէ:

2. Գնահատում և արդյունքներ

Սույն զեկույցի դիտողությունները հիմնված են առաքելության ընթացքում սեմինարների և հանդիպումների ժամանակ ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարների և աշխատակիցների հետ տեղի ունեցած քննարկումների վրա: Բավականին լավ առաջընթաց է գրանցվել Բ.4.1 առաքելությունից ի վեր հաշվետվական ձևերի վերանախագծման հետ կապված, որը կնպաստի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցմանը:

Ընդհանուր առմամբ, ԱՊ փորձագետները գտնում են, որ ՀՀ ԱՎԾ-ում և սույն գործունեությանը մասնակցություն ունեցած աշխատակիցները ակնհայտորեն ցուցաբերում են դրական և կառուցողական մոտեցում և հետաքրքրություն այս բաղադրիչի հանդեպ, ինչպես նաև դրսևորում են լավ նախաձեռնություններ նախորդ առաքելությունից ի վեր իրականացված գործողություններում:

Սույն բաղադրիչի աշխատանքային ծրագիրը ճշտվեց և կատարվեցին որոշ ճշգրտումներ Բ.4.2 առաքելության սկզբում:

Բաղադրիչի ղեկավար պրն Գագիկ Անանյանի կողմից ներկայացվեց ներկայիս կարգավիճակը, նախորդ գործունեությունից ի վեր առաջընթացը կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման հետ, նախագծման հարցերի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ-ի կողմից կատարված աշխատանքները՝ նախքան Բ.4.2 առաքելությունը:

2.1. Հաշվետվական ձևեր

Վերանախագծման գործընթացի ներկայիս կարգավիճակը

Աշխատանքը շարունակվել է հաշվետվական ձևերի վերանախագծման շուրջ և կատարվել են մի շարք համապատասխան փոփոխություններ: Զգալի նվազեցում է արդեն իսկ ձեռք բերվել հաշվետվական ձևերից դաշտերի կրճատման արդյունքում: Կառուցվածքը պարզեցվել է՝ հաշվետվական ձևերը դարձնելով առավել հարմարավետ ինչպես օգտվողի համար, այնպես էլ ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների համար:

11-ՀՄ հիմնական միջոցների հետազոտության հաշվետվական ձևի ուսումնասիրում

Առաքելության ընթացքում ուսումնասիրվեց 11-ՀՄ (հիմնական միջոցներ) հաշվետվական ձևի նոր նախագիծը: Նոր նախագծում հաշվետվական ձևի առաջին հատվածից կրճատվել է սյունակների քանակը՝ այն 13-ից դարձնելով 11 (մաշվածությունը հանվել է ինչպես և առաջարկվել էր Բ.3.2 առաքելության ժամանակ): Ներկայացվել են նաև որոշ առաջարկություններ հաշվետվական ձևի կառուցվածքի բարելավման վերաբերյալ: Որոշ առաջարկություններ են արվել նաև հաշվետվական ձևի բովանդակության վերանայման վերաբերյալ (տես բաժին 3.1):

Բիզնես ռեգիստրի հետազոտության ուսումնասիրում և նախագծային փոփոխությունների հետ կապված առաջարկություններ

ՀՀ ԱՎԾ պատրաստել է բիզնես ռեգիստրի հետազոտության հաշվետվական ձևի վերանայված նախագիծը: Այս նախագիծը ԱՊ փորձագետներն ուսումնասիրեցին Լիլիթ Պետրոսյանի և բիզնես ռեգիստրի բաժնի աշխատակիցների հետ միասին և առաջարկություններ տրվեցին հարցաթերթիկի բարելավման համար (տես բաժին 3.1):

Առաքելության ընթացքում պատրաստվեց ձևափոխված հարցաթերթիկի նոր նախագիծը, որտեղ հաշվի էին առնվել նշված մի շարք առաջարկությունները: Գործող և վերանախագծված հաշվետվական ձևերի օրինակները կարելի է գտնել զեկույցի Բ 4.2.10 և Բ 4.2.11 հավելվածներում:

Որոշվեց, որ գործող հաշվետվական ձևերը կշարունակվեն կիրառվել 2012 թվականի համար և նոր տարբերակը ուժի մեջ կդրվի 2013 թվականից:

Ընդհանուր նախագիծը և հաշվետվական ձևի փորձարկման սկզբունքները նույնպես քննարկվել են և ներկայացվել են որոշ առաջարկություններ (տես 3.1):

2.2. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման և ծանրաբեռնվածության նվազեցման վերաբերյալ կազմակերպվել էր սեմինար ՀՀ ԱՎԾ –ի ճյուղային բաժինների համար: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման մոդելը և ձևանմուշը ներկայացված են Բ 4.2.7 հավելվածում:

Բազիսային չափումը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ օգտվելով ստանդարտ ծախսերի մոդելից և ձևանմուշը լրացվել է բոլոր հետազոտությունների համար:

ԱՊ փորձագետները ձևանմուշին ավելացրել են լրացուցիչ հատված, որը կարող է օգտագործվել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցումը հաշվարկելու համար՝

- հարցաթերթիկում դաշտերի քանակի կրճատում
- ընտրանքի չափի նվազեցում
- հաճախականության նվազեցում

2.3. Բիզնես ռեգիստր

Ա. Կապը արտաքին շահառուների հետ

- Ընդհանուր առմամբ կապը արտաքին շահառուների հետ շարունակվել է Բ.4.1 առաքելությունից ի վեր և գրանցվել է որոշակի առաջընթաց: Կառավարությունը որոշում է ընդունել ազգային NACE դասակարգչի հնգանիշ կոդի կիրառման վերաբերյալ ամբողջ հանրային սեկտորում:

- ՀՀ կենտրոնական բանկ

  Ինչպես նախկինում նշվել էր Բ.4.1 առաքելության զեկույցում, ձեռնարկությունների տարեկան բիզնես հետազոտության ընդլայնումը 2011 թվականի համար համարվել է առաջընթաց: (Տարեկան բիզնես հետազոտության ընդլայնման պահպանումը կպահանջի արտաքին ֆինանսավորում, պարտադիր չէ, որ դա լինի կենտրոնական բանկի կողմից):

  Համաձայնություն է ձեռք բերվել ֆինանսական իրավաբանական միավորների վերաբերյալ ՀՀ ԱՎԾ-ին եռամսյակային կտրվածքով տվյալների տրամադրման վերաբերյալ, սակայն որևէ տվյալ դեռևս չի ստացվել:

  Քննարկումները շարունակվում են ՀՀ ԱՎԾ-ի կողմից կենտրոնական բանկին վիճակագրական տվյալների տրամադրման վերաբերյալ՝ տվյալների բազայի աղյուսակների տեսքով:

  Համագործակցությունը ամրագրվել է աշխատանքային խմբի տեսքով:

  Կենտրոնական բանկը միանգամայն կողմ է որակյալ միասնական վարչական ռեգիստրին:

- ՊԵԿ

  ՊԵԿ-ի կողմից (որը վարում է հարկային ռեգիստրը) ՀՀ ԱՎԾ-ն անհատական մակարդակում տեղեկատվություն է ստանում շրջանառության և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ: Ցավոք, կան խնդիրներ կապված այս տվյալների որակի հետ, ինչպես նաև առկա է ամբողջականության զգալի բացակայություն: Ցավոք ակնկալիքներ չկան, որ դրանց որակը և ընդգրկունությունը մոտ ապագայում կբարելավվի:

  Համաձայնություն է ձեռք բերվել, որ ՊԵԿ-ում կիրականացվեն փոփոխություններ NACE դասակարգչի հինգանիշ կոդերի կիրառման համար՝ ներկայիս քառանիշ NACE դասակարգչի փոխարեն: Այս փոփոխությունները կներկայացվեն 2013 թվականին: Բոլոր նոր գրանցված իրավաբանական միավորներին կտրվեն հինգանիշ NACE կոդեր: Ինչևէ դեռևս խնդիր կա այն իրավաբանական միավորների համար, որոնք գրանցվել են քառանիշ NACE կոդերով:

Մեծ աշխատանք է իրականացվել ՊԵԿ-ի աշխատակիցներին նոր ազգային NACE դասակարգչի վերաբերյալ վերապատրաստելու և տեղեկացնելու առումով: Ստեղծվել է թեժ գիծ ՀՀ ԱՎԾ-ում՝ դասակարգչի վերաբերյալ առաջացած ցանկացած հարցերի (գործնական) աջակցության համար:

- Ձեռնարկությունների պետական ռեգիստր (Արդարադատության նախարարություն)

  Ակնկալվում է, որ եզակի նույնականացման համարը կկիրառվի բոլոր վարչական ռեգիստրների կողմից, սակայն որևէ ժամանակացույց դեռևս որոշված չէ: Սակայն համաձայնությունը սկզբունքորեն ձեռք է բերվել ՊԵԿ-ի և Արդարադատության նախարարության Ձեռնարկությունների պետական ռեգիստրի միջև՝ ՊԵԿ-ի գրանցման համարը որպես եզակի նույնականացման համար ներկայացնելու վերաբերյալ: Ապագայում իրավաբանական միավորը պետք է գրանցվի (էլեկտրոնային եղանակով) նախ և առաջ պետական ռեգիստրում՝ նույնականացման համար ստանալու համար: Իսկ նոր իրավաբանական միավորներին կտրվի միայն մեկ միասնական եզակի նույնականացման համար, սակայն գործող իրավաբանական միավորների համար դեռևս կմնան երեք նույնականացումները՝ համենայն դեպս կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարներում:

  Արդարադատության նախարարությունը աշխատանքներ է տանում էլեկտրոնային եղանակով ինքնուրույն գրանցման համակարգ ստեղծելու և բարելավելու նպատակով:

  Պետական ռեգիստրի վերակազմակերպման գործընթացը շարունակվում է և ՀՀ ԱՎԾ – ն խնդիրներ ունի տեղեկատվության ստացման հետ կապված, որը վերաբերվում է արտաքին առևտրին, իրավաբանական միավորի հիմնադիրին, և այլն: Այնուամենայնիվ ՀՀ ԱՎԾ-ն համարում է, որ այս խնդիրները տեխնիկական բնույթ են կրում: ՀՀ ԱՎԾ-ն ակնկալում է, որ այս խնդիրներին շուտով լուծում կտրվի:

- Հասցեներ

  Բ 4.1 առաքելությունից ի վեր այս թեմայի շուրջ որևէ առաջընթաց չի գրանցվել: Հասցեների որակը դեռևս խնդիր է հանդիսանում, քանի որ հիմնականում ձեռնարկությունները չունեն իրավական պարտավորություն՝ցանկացած տեսակի հասցեների փոփոխությունը վարչական ռեգիստրներում գրանցելու համար:

  Պաշտոնական հասցեներով միասնական ռեգիստրը օգտակար կլինի էլեկտրոնային եղանակով ինքնուրույն գրանցման դեպքում: Իրավաբանական միավորը կարող է գտնել իր հասցեն (փողոցի անվանումը) ՝ հավաքելով միայն փոստային ինդեքսը և փողոցի անվանման 1-5 տառերը: Այնուհետև իրավաբանական միավորին կներկայացվեն բոլոր փողոցների անվանումները, որոնք համապատասխանում են այդ որոնմանը և այդտեղից հնարավոր է ընտրել փողոցի ճիշտ անվանումը: Կարող են ընտրվել միայն պաշտոնական հասցեները և կբացառվեն ուղղագրական սխալները: Սա նաև կապահովի, որ իրավաբանական միավորը լինի վարչական բիզնես ռեգիստրում, եթե որոնումը կատարվել է հասցեների կիրառման միջոցով:

- Շնորհանդես ներկայացվեց Դանիայի վեբ կայքի բերաբերյալ (www.cvr.dk), որտեղ հնարավոր է, որ ցանկացած անձ որոնի ցանկացած իրավաբանական միավորի (ներառյալ ձեռնարկատերերին): Եզակի նույնականացման համարների վերաբերյալ

տեղեկատվությունը, անվանումները, հասցեները, սեփականատերը (այս պահի դրությամբ միայն ձեռնարկատերերի համար, սակայն աշխատանք է տարվում նաև հիմնական սեփականատերերի և իրավաբանական անձանց հիմնադիրների վերաբերյալ), կազմակերպա-իրավական ձևը, գործունեության տեսակի կոդը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը, էլ. փոստը, վարկատուի տեղեկատվությունը (պարտադիր փակում կամ լուծարում) հանրային տեղեկատվություն է, այլ ոչ թե գաղտնի է: Դանիայի պաշտոնական հասցեների ռեգիստրը նաև ապահովում է, որ բոլոր գրանցված հասցեները լինեն գործող հասցեներ: Այս կայք էջից իրավաբանական միավորը կարող են ինքնուրույն գրանցվել և անվճար փոփոխություններ կատարել գրանցված տվյալներում: Դանիայի փորձից ելնելով, այս հանրային կայքը իրավաբանական միավորի համար պատճառ է հանդիսանում, որ այն ապահովի ստույգ տեղեկատվություն: Այս կայք էջից նաև հնարավորություն կա մուտք ունենալ ԴՎ առցանց հաշվետվական ձևերին:

- www.cvr.dk կայքի շնորհանդեսը ներառում է Դանիայի առևտրի և ձեռնարկությունների գործակալության (ԴԱԶԳ) և Դանիայի վիճակագրության հետ համատեղ մշակված մի գործիքի ներկայացում, որտեղ նշված գործակալությունը պատասխանատու է տեխնիկական իրականացման համար և ԴՎ-ը պատասխանատու է բովանդակության համար: Գործիքն ապահովում է, որ 10 իրավաբանական միավորներից 8-ը կարող են հեշտությամբ գտնել գործունեության ճիշտ կոդը՝ առանց որևէ հետագա օժանդակության, որի արդյունքում ժամանակ են խնայում ինչպես իրավաբանական միավորները, այնպես էլ ԴԱԶԳ –ը և ԴՎ-ը:

Ա. Ներքին նախաձեռնություններ

- ՀՀ ԱՎԾ-ի ներքին նախաձեռնությունները կենտրոնացված են եղել ՎԲՌ-ի տարեկան հետազոտության հաշվետվական ձևերի վերանախագծման վրա: Տես պարբերությունը՝ հաշվետվական ձևեր:

- ՎԲՌ-ի տվյալների զարգացման ռազմավարության

2012 թվականի օգոստոսի 20-24 Կոպենհագենում իրականացված ուսուցողական այցելության ժամանակ քննարկվեց, թե արդյոք Բ բաղադրիչի շոշոփելի արդյունքներից կարող է հանդիսանալ ՎԲՌ-ի զարգացման ռազմավարությունը առաջիկա ժամանակահատվածում: ՀՀ ԱՎԾ-ն ունի բազմաթիվ նախաձեռնություններ և ծրագրեր, որը ազդեցություն կունենա ՎԲՌ-ի վրա և որոնց լավ փաստաթղթավորված և մշակված պլանները արդեն իսկ գոյություն ունեն: Ակնկալվում է, որ ռազմավարության նախագիծը պատրաստ կլինի քննարկման համար սույն թվականի հոկտեմբեր ամսվա կեսերին: Որոշ հնարավոր գործողություններ նույնպես քննարկվել են սույն առաքելության ընթացքում, տես ստորև:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

3.1 Հաշվետվական ձևեր

11- ՀՄ –հիմնական միջոցներ

ԱՊ փորձագետներն առաջարկում են վերլուծություններ իրականացնել 11 ՀՄ հաշվետվական ձևի բովանդակության վերաբերյալ Դանիայի վիճակագրության ազգային հաշիվների փորձագետների հետ միասին՝ որոշելու համար, թե արդյոք հնարավոր է իրականացնել դաշտերի քանակի հետագա կրճատում:

Հաշվետվական ձևի կառուցվածքի վերաբերյալ տրվել են հետևյալ առաջարկությունները

- Առաջին էջը կարող է ունենալ նկարագրային էջի նման դասավորվածություն՝ ներքևում համառոտ օգնության տեքստով
- Առկա դաշտերը տարբեր չափեր ունեն և դրանցից շատերը բավականին փոքր են, որի պատճառով հաշվետվություն ներկայացնողը դժվարանում է տվյալներ մուտքագրել այդտեղ: Բոլոր դաշտերը պետք է լինեն միևնույն չափով և այնքան, որ հեշտությամբ այդտեղ հնարավոր լինի տվյալներ մուտքագրել:
- I բաժինը կարելի է բաժանել երկու էջերի, հնարավոր է A 3 էջի տեսքով, տողերի թիվը կարելի է կրկնել տողի վերջում՝ տվյալներ ներկայացնողի համար առավել հեշտ դարձնելով դրանց մուտքագրումը ճիշտ տողի վրա:
- II-V բաժինները տեղադրված են մեկ էջի վրա, որի արդյունքում դաշտերը շատ փոքր են տվյալներ մուտք անելու համար: Այս բաժինները պետք է տեղադրվեն երկու էջերի վրա:

Բիզնես ռեգիստրի հետազոտություն

Հետևյալ առաջարկությունները ներկայացվել են հաշվետվական ձևի կառուցվածքի վերաբերյալ՝

- Ստանդարտ հիմնական էջը կարող է կիրառվել բիզնես ռեգիստրի հետազոտության հաշվետվական ձևի վերևի մասում, քանի որ դա հնարավորություն կտա խնայել տարածք և այն պարունակում է նաև միևնույն տեղեկատվությունը ինչը և ունեն 1-4 և 8-րդ հարցերը:
- Հարկ վճարողի համարը պետք է տեղադրված լինի իրավաբանական անձից և պետական ռեգիստրի կոդերից առաջ, քանի որ դա այն թիվն է, որ պետք է տրվի բոլոր նոր ձեռնարկություններին: Այս փոփոխությունը կարելի է իրականացնել բոլոր առաջին էջերի համար:
- Կարելի է դիտարկել 6-7 հարցերի կառուցվածքի բարելավումը, քանի որ այս կերպ հնարավոր կլինի ունենալ առավել շատ տարածք:
- Երկրորդ էջի վրա գտնվող աղյուսակը (10-12 հարցեր) կարելի է ձևափոխել էջի պատկերային դասավորությամբ: Սյունյակների վերևի անվանումները կարող են փոքրացվել և լրացուցիչ տեղեկատվությունը կարելի է տեղափոխել տեքստի տեսքով այդ հատվածի վերևի մասում (տես դասավորվածության վերաբերյալ առաջարկությունը հավելված 4-ում):

- Տրանսպորտի վերաբերյալ հարցը չպետք է ներառվի բիզնես ռեգիստրի հետազոտության հարցաթերթիկում:
- Վերջնական նախագիծը կարելի է փորձարկել 20-30 ձեռնարկությունների շրջանում՝ նախքան դրանց հաստատումը և կիրառման մեջ դնելը:

Ընդհանուր առաջարկություններ հարցաթերթիկի նախագծի վերաբերյալ

ԱՊ փորձագետներն առաջարկում են, որ փորձարկման ընթացակարգերը պետք է իրականացվեն բոլոր վերանախագծված հաշվետվական ձևերի համար՝ նախքան դրանց ներկայացումը Արդարադատության նախարարության հաստատմանը: Այն հաշվետվական ձևերը, որոնք արդեն իսկ հաստատվել են, պետք է ենթարկվեն փորձարկման ձեռնարկությունների փոքր թվի շրջանակներում՝ նախքան դրանց կիրառումը ընդհանուր համակցության/ընտրանքի մեջ:

1) Առաջարկություններ հաշվետվական ձևի նախագծման (դիզայն) բարելավման համար՝
- Դաշտերի չափերի ստանդարտացում, հարցերի ձևաչափեր
- Օգնության տեքստերի ինտեգրում և առավել համառոտ վերնագրեր

2) Փորձարկել այն հաշվետվական ձևերը, որոնք ենթարկվել են հիմնական փոփոխությունների
- Փորձագիտական տեսակետ (մեթոդաբանություն և համապատասխան ճյուղային բաժիններ)
- Ներքին և արտաքին սպառողների հետ փորձարկում (նվազագույնը 5 անձ)
- Նախնական փորձարկումներ (10-20 ձեռնարկություններ)

3) Հրահանգների ուսումնասիրում և վերանախագծում

- Վերարտադրել տեքստերը պարզ լեզվով
    - Օգտագործել ծանոթ բառապաշար (թիրախային սպառողի համար)
    - Համառոտ, հաստատական ներգործական նախադասություններ
    - Օգտագործել կետեր, աղյուսակներ, տարածություն
    - Օգտագործել օգնող վերնագրեր – կիսել տեքստը համապատասխան կետերում:
- Կրճատել այն հրահանգները, որոնք անհրաժեշտ չեն

Փորձարկման և վերանախագծման մեթոդների առավել մանրամասնությունները կարելի է գտնել նախորդ առաքելության զեկույցի Բ 4.1.8 հավելվածում:

3.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցումը պետք է հաշվարկվի և մուտքագրվի ձևանմուշում՝
- վերանախագծված հարցաթերթիկներ
- հետազոտություններ, որոնց ընտրանքի չափը/հաճախականությունը կրճատվել է

Պետք է իրականացնել ծանրաբեռնվածության արժեքի վերլուծությունները՝ ելնելով բազիսային չափումից: Հետազոտությունները պետք է դասակարգվեն ըստ արժեքների՝ առավել ծախսատարից մինչև քիչ ծախսատար հետազոտություններ:

Այս տեղեկատվության հիման վրա պետք է մշակվի ծրագիր ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետագա նվազեցման վերաբերյալ՝ սկսելով առավել ծախսատար հետազոտություններից:

Կարիք չկա իրականացնել հետագա բազիսային չափումներ: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը կարելի է նշել՝ օգտվելով ներկայիս բազիսային չափումներից:

Առաջարկվել է, որ վերանախագծված հաշվետվական ձևերը պետք է փորձարկվեն բազիսային չափման մեջ ներառված ձեռնարկությունների մի փոքր թվի շրջանակներում՝ փոփոխությունների վերաբերյալ ռեսպոնդենտների արձագանքը ստանալու համար: Ուսուցողական այցելություն ժամանակ, որը տեղի էր ունեցել 2012 թվականի օգոստոսին, ներկայացվել է գոհունակության ինդեքսի հաշվարկման բանաձևը: Այս բանաձևը կարող է կիրառվել գոհունակության ինդեքսի հաշվարկման համար՝ ելնելով կամավոր հարցաթերթիկի պատասխանների արդյունքներից (տես հավելված 5):

3.3 Բիզնես ռեգիստր

ԱՊ փորձագետները համարում են, որ վարչական ռեգիստրներից ստույգ և ամբողջական տվյալների տրամադրումը ՀՀ ԱՎԾ-ի կարևորագույն մարտահրավերներից է: Այդ իսկ պատճառով ԱՊ փորձագետները միանգամայն խորհուրդ են տալիս, որ ՀՀ ԱՎԾ-աշխատանքներ սկսի ֆորումի ուղղությամբ (աշխատանքային խմբի տեսքով), որի նպատակն է լինելու բարելավել իրավաբանական միավորների վերաբերյալ հիմնական տեղեկատվության որակը: Աշխատանքային խումբը կարող է օգտվել Դանիայի փորձից, որը վերաբերվում է այդ տեղեկատվության հանրային մատչելիությանը՝կապ ստեղծելու համար այդ տեղեկատվությունը ներկայացնող կայք էջի և այս տվյալների պլանավորված էլեկտրոնային հաշվետվությունների տրամադրման միջև: Դանիայի վիճակագրությունը առաջարկում է մշակել հրավերքի նամակի նախագիծ՝ հնարավոր շահառուներին այդ աշխատանքային խմբում մասնակցության համար, որտղ կքննարկվի ընդհանուր վարչական բիզնես ռեգիստրի գաղափարը:

Թվինինգ ծրագրի սկզբում, ԱՊ փորձագետներին ցույց էր տրվել, թե ինչպես է կազմակերպված ՎԲՌ-ը: Ակնհայտ է, որ այն ռեգիստրից, որտեղից ստացվում է տեղեկատվությունը անհատական իրավաբանական միավորների վերաբերյալ հնարավոր է սահմանել առաջնահերթությունների կանոններ: Սակայն, քանի դեռ հնարավոր չէ հիմնվել վարչական ռեգիստրների տվյալների վրա, հնարավոր չէ սահմանել այդ կանոնները: Պարզ է, որ ՎԲՌ-ի կառուցումը պետք է համապատասխանի հիմնական ռեգիստրի պահանջներին, պարունակի այն համակցությունը, որից պետք է կազմել ընտրանքը: Բ.4.1 առաքելության զեկույցում ԱՊ փորձագետները վերապահումներ ունեին կիրառված գործիքների վերաբերյալ, քանի որ ակնկալվում է, որ տվյալների բազան ժամանակի ընթացքում կընդլայնվի:

ԱՊ փորձագետներն առաջարկում են, որ վարչական աղբյուրներից ստացված տվյալների որակի բարելավումից անմիջապես հետո տվյալների որակի հետ կապված առկա առաջնահերթությունների կանոնները պետք է վերանայվեն: Իսկ կանոնների որոշման

ժամանակ կարևոր է որոշել, թե արդյոք մի տեղեկատվությունը ավելի լավն է, քան մյուսը, նույնիսկ եթե ՀՀ ԱՎԾ-ին դրանց տրամադրման մեջ ուշացումներ լինեն: [1]

Առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ-ն որպես որակի հետ կապված աշխատանքների մի մաս ուսումնասիրություններ կատարի հասցեների փոփոխությունների աղբյուրների վերաբերյալ այն դեպքերում, երբ իրավաբանական միավորները իրականում տեղեկացրել են ՀՀ ԱՎԾ-ին, որ գործունեությունը այլևս չի ծավալվում այն հասցեում, որտեղ գրանցվել է տվյալ իրավաբանական միավորը, այլ իրականացվում է մեկ այլ հասցեում: Իհարկե այս տեղեկատվությունը հավաքագրվում է տարեկան ՎԲՌ-ի հետազոտության միջոցով (եթե բոլոր իրավաբանական միավորները չլրացնեն ՎԲՌ-ի հետազոտության հարցաթերթիկը, դա կարելի է ստանալ այլ հետազոտություններից): ՀՀ ԱՎԾ-ն պետք է տեղյակ լինի հնարավոր զարգացումներից իրավաբանական միավորների վերաբերյալ, որոնք ընդլայնվում են և գործունեություններ են ծավալում ավելի շատ ոլորտներում (առանց առանձին իրավաբանական միավորի յուրաքանչյուր մասի առանձին գրանցման): 1

Եթե ՀՀ ԱՎԾ-ն մասնակցի նոր էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգի աշխատանքներին, ապա խորհուրդ է տրվում նաև ուշադրություն դարձնել լեզվի օգտագործման վրա: Այն պետք է լինի հստակ և հակիրճ:

ԱՊ փորձագետներն առաջարկում են մշակել ռազմավարական փաստաթուղթ՝ նկարագրելով հնարավոր նպատակները և այն նախաձեռնությունները, որոնք պետք է ձեռնարկել յուրաքանչյուր նպատակին հասնելու համար (ի վերջո դրանք պետք է լինեն մեկից ավելին): Քանի որ ՀՀ ԱՎԾ –ն կախվածություն ունի նաև արտաքին շահառուներից վարչական աղբյուրներից տվյալների ստացման առումով և ՀՀ ԱՎԾ-ի շահերից է բխում լավ ընդգրկմամբ որակյալ տվյալների ձեռք բերման համար ռազմավարության մշակումը:

Միայն ներքին կախվածությամբ ռազմավարության տարրերը կարող են նաև ազդեցություն ունենալ: Որոշ ռազմավարական տարրեր ներկայացված են հավելված 6-ում, որը Բ.4.1 առաքելության զեկույցում ներկայացված նախագծի մշակումն է: Անհրաժեշտության դեպքում այս ցանկը ՀՀ ԱՎԾ-ն բնականաբար կարող է համալրել լրացուցիչ ռազմավարական տարրերով:

ԱՊ փորձագետներն առաջարկում են արտաքին շահառուների հետ շարունակել երկխոսությունները՝ աշխատանք սկսելու համար ընդհանուր վարչական բիզնես ռեգիստրի շուրջ, ներառյալ միասնական նույնականացման համարները: Առաջարկվում է ՀՀ ԱՎԾ-ին դիտարկել հետևյալ ասպեկտները՝

- Նախապատրաստել բարձրաստիճան հանդիպում, որը տեղի կունենա հաջորդ առաքելության ընթացքում

[1] Հայաստանյան բիզնեսի կառուցվածքը բաղկացած է շատ քիչ իրավաբանական այնպիսի միավորներից, որոնք միաժամանակ գործունեություն են ծավալում նաև այլ մարզերում: Նման իրավիճակում, իրավաբանական միավորի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասը գրանցված է այնպես, որ յուրաքանչյուր մասը ինքնուրույն իրավաբանական միավոր է: Բոլոր այս իրավաբանական միավորները (ներառյալ իրավաբանական միավորի մասերը) կարող են տրամադրել անհրաժեշտ հաշվապահական տվյալներ և տվյալներ տրամադրել աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ ըստ մարզերի և շրջանառության վերաբերյալ ըստ գործունեությունների: Ներկայումս վիճակագրական որևէ պատճառներ չկան՝ գրանցելու համար տեղական գործունեության տեսակի միավորներին կամ տեղական միավորներին: ՎԲՌ-ը կծանրաբեռնվի միավորներով, որոնք անհրաժեշտ չեն: ԱՊ փորձագետները հասկանում են սա, եթե որևէ լրացուցիչ տվյալներ չի պահանջվում:

- Որոշել, թե ովքեր են լինելու արտաքին գործընկերները (ՊԵԿ, ԿԲ, Պետռեգիստր, ոստիկանություն, տարածքային գործակալություններ և այլն)
- Պատրաստել նյութեր, որոնք պետք է քննարկվեն այդ հանդիպման ընթացքում – այն կարող է ներառել օրինակ հետևյալը՝
  - Ինչպես պետք է իրականացնել միասնական նույնականացման համարները բոլոր հանրային ռեգիստրներում
  - Ինչպես պետք է լուծել հասցեների որակի հետ կապված խնդիրները (հանրային հասանելություն ՀԲՌ-ին (կայք էջ), հիմնական տեղեկատվության անվճար գրանցում և արդիականացում, տուգանքներ, եթե տեղեկատվությունը չի արդիականացվում (հինգ) օրերի ընթացքում)
  - Ինչպես պետք է նվազեցնել ձեռնարկությունների ծանրաբեռնվածությունը տարբեր ռեգիստրներին տվյալներ ներկայացնելու հետ կապված
  - Ինչպես օպտիմալացնել ՀՀ ԱՎԾ-ին տվյալների տրամադրումը
- Ուսումնասիրել, թե ինչպես կարելի է օպտիմալացնել (և ֆինանսավորել) աշխատանքը – ի վերջո որպես փորձնական ծրագրեր, որոնց նպատակն է ձեռք բերել համաձայնություն հետագա քայլերի շուրջ

- Հաղորդակցությունը ՊԵԿ-ի հետ կարող է ներառել՝
  - Քննարկումներ, թե ինչպես կարելի է անցում կատարել NACE Rev.2 դասակարգչի քառանիշ մակարդակից հնգանիշ մակարդակով տվյալների ստացմանը
  - Ինչպես կարելի է լուծել որակի հետ կապված հարցերը և տվյալների տրամադրման ընդլայնումը
- ՀՀ Կենտրոնական բանկ
  - Քննարկել թե երբ կարելի է սկսել տվյալների որոշված եռամսյակային տրամադրումը

Ավելին, ԱՊ փորձագետներն առաջարկում են շարունակել աշխատանքը ՎԲՌ-ի ռազմավարության վերաբերյալ և ՎԲՌ հաշվետվական ձևերի վերանախագծման գործընթացը՝ ներառյալ դրանց փորձարկումը:

Հավելված 6 –ում ներկայացված է ՎԲՌ-ի ռազմավարության փաստացի բովանդակության օրինակը:

4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող գործողություններ (Բ.6)

4.1 Հաշվետվական ձևեր

Հետևյալ գործողությունները պետք է իրականացվեն նախքան հաջորդ առաքելությունը (Բ.6)

1) 11-ՀՄ հարցաթերթիկ

- ԴՎ կուսումնասիրի և կտրամադրի առաջարկություններ բովանդակության հնարավոր փոփոխությունների վերաբերյալ
- Պետք է իրականացվեն համապատասխան բարելավումներ նախագծման վերաբերյալ (տես բաժին 2.1)

2) Բիզնես ռեգիստրի հետազոտություն

- Վերանայված նախագիծը պետք է թարգմանվի անգլերեն և ուղարկվի Դանիայի վիճակագրություն վերջիններիս կարծիքների համար
- Դանիայի վիճակագրությունը կուսումնասիրի հարցաթերթիկը և ՀՀ ԱՎԾ-ին կտրամադրի իրենց առաջարկությունները
- Նոր հարցաթերթիկը պետք է փորձարկվի ձեռնարկությունների շրջանում՝ ապահովելու համար վերջինիս հարմարավետությունը և տվյալների որակը նախքան դրանք Արդարադատության նախարարության հաստատմանը ներկայացնելը

4.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Հետևյալ գործողությունները պետք է իրականացվեն նախքան հաջորդ գործունեությունը (Բ.6)

1. ՀՀ ԱՎԾ պետք է ավարտի ծանրաբեռնվածության նվազեցման հաշվարկները և ուղարկի վերջնական լրացված ձևանմուշը Դանիայի վիճակագրություն նախքան հաջորդ գործունեությունը:
2. Դանիայի վիճակագրությունը կկատարի վերլուծություններ այդ ձևանմուշից և կներկայցնի եզրակացությունները հաջորդ առաքելության ժամանակ:
3. ՀՀ ԱՎԾ պետք է պատրաստի հետազոտությունների առաջնահերթությունների ցանկը՝ որոշելու համար, թե որ հետազոտություններն են առավել ծախսատար և թե որտեղ պետք է իրականացնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում:
4. Պետք է մշակել ռազմավարություն ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման հետագա աշխատանքների համար հաջորդ առաքելության հետ կապված:

4.3 Բիզնես ռեգիստր

Հետևյալ գործողությունները պետք է իրականացվեն նախքան հաջորդ գործունեությունը (Բ.6)

1. ՎԲՌ-ի ռազմավարության վերջնական նախագիծը պետք է պատրաստ լինի Բ.6 գործունեությունից մեկ ամիս առաջ:
2. Պատրաստել ՎԲՌ-ի տարեկան հետազոտության հաշվետվական ձևի նախագիծը (իրավաբանական միավոր/անհատ ձեռնարկատերեր)
3. Նախապատրաստվել բարձրաստիճան հանդիպմանը, որը տեղի կունենա հաջորդ առաքելության ժամանակ, ներառյալ անհրաժեշտ նյութերը, որոնք նախապես կբաժանվեն արտաքին գործընկերներին:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք (Բ.4.2), Սեպտեմբերի 3-7, 2012

Բաղադրիչ Ա	Որակի Կառավարում
Բաղադրիչ Բ	***Բիզնես ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն***
Բաղադրիչ Գ	ՀՆԱ –ի ամբողջականության բարելավում
Բաղադրիչ Դ	Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե	Հարմոնիզացված Սպառողական Գների ինդեքս
Բաղադրիչ Զ	ՏՀՏ Հանրություն

Գործունեություն Բ4.2 Սեմինար վերապատրաստում

1. Գործունեության նպատակը

Հետևելով Բ4.1 գործունեությանը՝ սույն գործունեության նպատակն է շարունակել համապատասխան աշխատակիցների վերապատրաստումը հաշվետվական ձևերի վերակազմակերպման հարցերի և ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրության բիզնես ռեգիստրի վերաբերյալ:

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

- Շարունակել Բ4.1 գործունեության ընթացքում նախաձեռնված գործընթացը ՀՀ ԱՎԾ-ի Վիճակագրական Բիզնես ռեգիստրի զարգացման ռազմավարության վերաբերյալ;
- Որոշել արտաքին կախվածության աստիճանը և հետևանքները կապված ՎԲՌ-ի ռազմավարության հետ - և հնարավոր այլընտրանքները;
- Շարունակել Բ4.1 –ի գործընթացը՝ հաշվետվական ձևերի վերակազմակերպման, վերանախագծման և փորձարկման վերաբերյալ;
- Գնահատել և զարգացնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման մեթոդը;

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության Խորհրդի Անդամ (*ՇԵ Բաղադրիչի ղեկավար*)
Լիլիթ Պետրոսյան, Մեթոդաբանության բաժնի ղեկավար
Լայերտ Հարությունյան, Բիզնես Ռեգիստրի բաժին
Գարիկ Խաչատրյան, Բիզնես Ռեգիստրի բաժին

Վիբեկե Սկով Մյուլլեր, գլխավոր խորհրդատու, Դանիայի Վիճակագրություն
Տիկին Աշու Քոնրադ, ավագ խորհրդատու, Դանիայի Վիճակագրություն

ՀՀ ԱՎԾ այլ աշխատակիցներ, որոնք մասնակցում են գործունեությանը

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ

Արտաքին շահառուներ
ՀՀ Կենտրոնական բանկ
ՀՀ Պետական Եկամուտների կոմիտե
ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն (կամ այլ մարմիններ, որոնք առնչվում են հասցեների ռեգիստրի հետ)

Հավելված 2. Առաքելության ծրագիրը, սեպտեմբերի 3-7, 2012

4. ԱՊ փորձագետների հանդիպման ծրագիրը, սեպտեմբերի 3-7, 2012

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը/մանրամասները
Երկուշաբթի 3 Սեպ. առավոտյան	Կոնգրես հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Ընթացիկ կարգավիճակը. Առաջընթացը և զարգացումները վերջին գործունեությունից ի վեր 1.Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում 2. Բիզնես Ռեգիստր (ռազմավարություն) 3. Հարցաթերթիկների նախագծում
Երեքշաբթի, 4 Սեպ. առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում մեթոդաբանության և բիզնես ռեգիստրի բաժնի հետ	11 ՀՄ և Բիզնես Ռեգիստրի հետազոտության հաշվետվական ձևերը – քննարկումներ հարցերի արձանագրության առաջընթացի վերաբերյալ (տես Հավելված 6 , Բ.4.1)
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Սեմինար բիզնես ռեգիստրի վերաբերյալ	Տվյալների փոխանակումը հարկային մարմինների հետ և դրանց հետ կապված որակի աշխատանքները բիզնես ռեգիստրի վերաբերյալ-Դանիայի փորձը
	ՀՀ ԱՎԾ	Սեմինար ռեսպոնդենտի ծանրաբեռնվածության վերաբերյալ	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափումը և ծանրաբեռնվածության նվազեցման չափումը – մոդելի շնորհանդես
Չորեքշաբթի 5 Սեպ. առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Սեմինար մեթոդաբանության բաժնի հետ	Հաշվետվական ձևերի վերանախագծման ընթացիկ աշխատանքների ներդրում-փորձարկման ընթացակարգերը և կոնկրետ հաշվետվական ձևեր, որոնք ներկայումս վերանախագծվում են
	ՀՀ ԱՎԾ	Սեմինար բիզնես ռեգ. վերաբերյալ արտաքին շահառուների հետ	ՎԲՌ-ի ռազմավարության նախագծի քննարկումներ և հնարավոր հետևանքները ՀՀ ԱՎԾ-ի և արտաքին շահառուների համագործակցության համար
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում մեթոդաբանության բաժնի հետ	Հաշվետվական ձևերի վերանախագծումը և ուղեկցող հրահանգները ծրագրի մնացած ժամանակահատվածում և դրանից հետո. ծրագիրը և ռազմավարությունը
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Բիզնես	Փորձարկման և արդիականացման գործընթացները, որոնք վերաբերվում են

		ռեգիստրի բաժնի հետ	ՊԵԿ-ի տվյալներին՝ հաշվի առնելով երեքշաբթի և չորեքշաբթի օրերի սեմինարները
Հինգշաբթի, 6 Սեպ. առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Այլ ներդրումներ զեկույցի համար
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Այլ ներդրումներ զեկույցի համար
Ուրբաթ, 7 Սեպ. առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Եզրակացությունների և առաջարկությունների վերաբերյալ շնորհանդեսի պատրաստում
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, որոշումներ և առաջարկություններ: Հետևանքները հաջորդ առաքելության համար և ՇԵ փորձագետների ենթադրելի աշխատանքային ծրագիրը:

Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել

Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ (*ՇԵ բաղադրիչի ղեկավարի*)
Լիլիթ Պետրոսյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Լայերտ Հարությունյան, Բիզնես ռեգիստրի բաժնի պետ
Գարիկ Խաչատրյան, Բիզնես ռեգիստրի բաժին

Վիբեկե Սկով Մյուլլեր, գլխավոր խորհրդատու, Դանիայի Վիճակագրություն
Տիկին Աշու Քոնրադ, ավագ խորհրդատու, Դանիայի Վիճակագրություն

ՀՀ ԱՎԾ այլ աշխատակիցներ, որոնք մասնակցել են գործունեությանը

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, ՀՀ ԱՎԾ Միջազգային վիճակագրական համագործակցութ. բաժնի պետ

Ա. Անանյան, ՀՀ ԱՎԾ Արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ
Ա. Ավագյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ
Հ. Տիտիզյան, ՀՀ ԱՎԾ Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ
Գ. Թորոսյան, ՀՀ ԱՎԾ Տրանսպորտի վիճակագրության բաժնի պետ
Լ. Գրիգորյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության վիճակագրութ. բաժնի գլխավոր մասնագետ
Գ. Վարդանյան, ՀՀ ԱՎԾ Առևտրի և այլ ծառայությունների բաժնի է I կարգի մասնագետ
Ի. Բարոյան, ՀՀ ԱՎԾ Առևտրի և այլ ծառայությունների բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Ներսիսյան, ՀՀ ԱՎԾ Տրանսպորտի և կապի վիճակագրութ. բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Գրբոյան, ՀՀ ԱՎԾ Վիճակագրական աշխ. Մեթոդաբանութ.և դասակարգիչների բաժին
Ռ. Շաբոյան, ՀՀ ԱՎԾ Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Ա. Նալբանդյան, ՀՀ ԱՎԾ Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Ա. Անտոնյան, ՀՀ ԱՎԾ Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Լ. Պարոնյան, ՀՀ ԱՎԾ Շինարարության վիճակագրության բաժին
Ա. Օհանջանով, ՀՀ ԱՎԾ Ֆինանսների վիճակագրության բաժին

Արտաքին շահառուներ

ՀՀ Կենտրոնական բանկ
ՀՀ Պետական եկամուտների կոմիտե
Պետական ռեգիստր

Արմենուհի Ծառուկյան, ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե
Մարտին Գալստյան, ՀՀ Կենտրոնական բանկ
Աշոտ Գաբրիելյան, ՀՀ Կենտրոնական բանկ
Արուսյակ Խանգելդյան, ՀՀ Կենտրոնական բանկ
Աննա Մարգարյան, Իրավաբանական անձանց պետական ռեգիստր

Հավելված 4. ԲՌՀ-ն 10-12 հարցերի նախագծի օրինակը

Նախագծի օրինակ 1:

Խնդրում ենք լրացնել այն գործունեությունները, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների վաճառքից ստացված ծավալի/հասույթի հետ միասին, ինչպես նաև յուրաքանչյուր գործունեության տեսակի մեջ ներգրավված աշխատակիցների ամսեկան միջին ցուցակային թվաքանակի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործունեություններ	Շրջանառության ծավալը/հասույթը 1000 – ական դրամով (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի)	Աշխատակի ցների միջին թվաքանակը	NACE դասակարգիչը, որը պետք է լրացվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից
1.			
2.			
3.			
4.			
5.			

Նախագծի օրինակ 2.

Խնդրում ենք լրացնել այն գործունեությունները, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների վաճառքից ստացված ծավալի/հասույթի հետ միասին, ինչպես նաև յուրաքանչյուր գործունեության տեսակի մեջ ներգրավված աշխատակիցների ամսեկան միջին ցուցակային թվաքանակի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործունեություններ	Շրջանառության ծավալը/հասույթը 1000 – ական դրամով (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի)	Աշխատակի ցների միջին թվաքանակը	NACE դասակարգիչը, որը պետք է լրացվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից
1.			
2.			
3.			
4.			
5.			

Հավելված 5. Գոհունակության ինդեքսի հաշվարկումը

Հնարավոր է հաշվարկել <<գոհունակության ինդեքսը>> ելնելով լրացուցիչ հարցաթերթիկի կամավոր հարցերի պատասխանների վրա (տես ստորև): Կամավոր հարցաթերթիկը կարելի է ուղարկել ձեռնարկություններին վերանախագծված հաշվետվական ձևերից որևէ մեկի հետ միասին:

Հարցաթերթիկի օրինակ

Կամավոր հարցեր, որոնք վերաբերվում են ծախսված ժամանակին և հարմարավետությանը

	ժամեր		ռոպեներ
Քանի ժամ եք (աշխատանքային) դուք ծախսել հարցաթերթիկը լրացնելու վրա: Ծախսված ժամանակը պետք է ներառի այն ժամանակը, որը ծախսվել է հարցաթերթիկի տվյալների լրացման համար, ինչպես նաև այն ժամանակը, որը ծախսվել է ձեռնարկությունում համապատասխան տեղեկատվությունը գտնելու համար:		+	

	Դժվար էր արդյոք կամ ժամանակատար էր արդյոք			
Դժվար էր արդյոք…	Շատ	Որոշ չափով	Փոքր-ինչ	Բոլորովին
- Հասկանալ հարցերը				
- Հասկանալ ցուցումները				
- Հավաքել համապատասխան տեղեկատվությունը				
-Լրացնել հարցաթերթիկը				

Խնդրում ենք նկարագրել խնդիրները:

Գոհունակության ինդեքսը կարելի է հաշվարկել վերը նշված հարցերից յուրաքանչյուրի համար:

Պատասխանները տրվում են հետևյալ արժեքներով.

<<շատ>> = 0
<<որոշ չափով>>= 1
<<փոքր-ինչ>> = 2
<<բոլորովին>> = 3

Գոհունակության ինդեքսը = 100* (∑ պատասխան/3)/n, որտեղ n-ը պատասխանների քանակն է:

Գոհունակության ինդեքսը՝

= 100, եթե բոլորը պատասխանում են <<բոլորովին>>
= 0, եթե բոլորը պատասխանում են <<շատ>>
= 50, եթե ռեսպոնդենտների միջին պատասխանն է <<որոշ չափով>> և <<փոքր-ինչ>>:

Որոշ օրինակներ, թե ինչպես է ինդեքսը կիրառվել Դանիայի վիճակագրությունում կարելի է տեսնել ներկայացված շնորհանդեսում <<***Ռեսպոնդենտների պատասխանների չափումը***>>, որը ներկայացվել է օգոստոս ամսին ուսուցողական այցելության ժամանակ:

Հավելված 6. ՀՀ ԱՎԾ –ի վիճակագրական բիզնես ռեգիստրի ռազմավարությունը

ՀՀ ԱՎԾ –ի վիճակագրական բիզնես ռեգիստրի ռազմավարություն – 3-5 տարիների զարգացման ռազմավարություն (նախագիծ)

1. Ռազմավարության նպատակը

Ռազմավարության նպատակն է ներկայացնել վիճակագրական բիզնես ռեգիստրի հնարավոր զարգացման սցենարների հաջորդական տեսությունը առաջիկա 3-5 տարիների համար:

2. Ընդհանուր նպատակը

Սցենարներից յուրաքանչյուրը և դրանց առնչվող նախաձեռնությունները, կարելի է ասել, որ ունեն երեք հիմնական նպատակներ՝

- Բարելավել բիզնես ռեգիստրի տեղեկատվության ընդհանուր որակը
- Բարելավել Հայաստանյան ձեռնարկությունների ընդհանուր ընդգրկունությունը (ներառյալ անհատ ձեռնարկատերերին)
- Նպաստել ՀՀ ԱՎԾ-ի կողմից Հայաստանյան ձեռնարկությունների վրա դրված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցմանը

3. Ռազմավարության հիմնական տարրերը

3.1. Արտաքին փոխկախվածությամբ տարրեր

3.1.1 Նպատակը. տվյալների առավել լավ որակ վարչական ռեգիստրներից
Նախաձեռնությունները.

3.1.1.1. Աշխատանքը արտաքին գործընկերների հետ՝ Հայաստանում միասնական վարչական բիզնես ռեգիստր (ՎԲՌ) ստեղծելու ուղղությամբ

- Որոշել, թե ովքեր են լինելու համապատասխան արտաքին գործընկերները (ներառյալ ոսկտիկանությունը, ՀՀ ներքին գործերի նախարարությունը կամ այլ համապատասխան մարմիններ)
- Հրավիրել խմբին և որոշել հետագա աշխատանքները
- Հնարավոր համագործակցության ոլորտները.
  - Համառոտ ժամկետներում եզակի նույնականացման համարների կիրառումը բոլոր հանրային ռեգիստրներում (բանակցությունները պետք է սկսել շատ արագ, և որոշ դեպքերում հնարավոր կլինի ճշգրիտ փոխակերպել դրանք; այստեղ հնարավոր չէ որևէ բան

անել; հանրային սեկտորը ներառում է նաև քաղաքապետարաններ, և այլն)

- Պաշտոնական հասցեների ռեգիստրի հիմնումը

Կարելի է իրականացնել փորձնական նախագիծ, որը պետք է ներառի ուսումնասիրություն, թե ինչպես են ներկայումս կազմված հասցեները տարբեր քաղաքապետարաններում (կամ այլ համապատասխան ոլորտներում): Այն պետք է լինի ամենայն մանրամասնությամբ՝ բացահայտելու համար բոլոր հատուկ իրավիճակները (առնվազն, բոլոր իրավիճակները պետք է դիտարկվեն, որոնց հետ կարելի է վարվել տարբեր կերպով), ինչպես օրինակ այն առանձնատները, որոնք գտնվում են փողոցներից շատ հեռու հեռավորության վրա: Զգալի տարբերություն կարող է լինեն քաղաքների և գյուղական բնակավայրերի միջև: Իրավիճակը կարող է լինել այնպիսին, որ հասցեների ռեգիստրի ամբողջական առավելությունը ստանալու համար անհրաժեշտ կլինի իրականացնել որոշ փոփոխություններ գործող սովորական ընթացակարգում: Օրինակ, դա կարող է լինեն որոշ շենքերի համարների կրկին համարակալում՝ ապահովելու համար այն, որ հնարավոր լինի ստեղծել <<շրջաններ/թաղամասեր>> հասցեների կոդերի հիման վրա:

Անհրաժեշտ կլինի նկարագրել, թե քանի տարբեր շահառուներ են արդեն իսկ հասցեներ վարում: Արդյոք այլ մարմիններ/կառույցներ արդեն իսկ ունեն նմանօրինակ որևէ բան, որը կարող է օգտակար լինել:

Պետք է նկարագրել կանոնները, թե ինչպես պետք է գրանցվեն հասցեները: Փորձնական ծրագիրը կարող է իրականացվել Երևանի որևէ փոքր տարածաշրջանի համար: Ի վերջո, պետք է ընդունվի օրենք՝ ապահովելու համար ընդհանուր համաձայնություն՝ ՀՀ-ում միասնական հասցեների ռեգիստրի ստեղծման համար:

- Հանրային հասանելիություն ՀԲՌ –ին (կայք էջին)
- Անվճար գրանցում և արդիականացում
- Տուգանքներ, եթե տեղեկատվությունը չի արդիականացվում մի քանի օրերի ընթացքում (հինգ օր)

3.1.1.2. Համագործակցությունը Պետական եկամուտների կոմիտեի հետ՝ նրանց կողմից ստացվող տեղեկատվության որակը և ամբողջականությունը բարելավելու համար:

- Քննարկել, թե ինչպես կարելի է անցում կատարել NACE խմբ. 2 դասակարգչի քառանիշ մակարդակից հնգանիշ մակարդակին: Վերլուծել ՎԲՌ-ում NACE խմբ. 2 դասակարգչի բաշխումը՝ հնգանիշ մակարդակի կոդեր տրամադրելով ձեռնարկություններին, այն դեպքում երբ ՊԵԿ-ի կողմից վերանայված կոդերը քառանիշ մակարդակում են եղել:

- Քննարկել, թե ինչպես կարելի է լուծել որակի հարցերը և տվյալների տրամադրման ընդլայնումը (մշակել պլան հասույթի և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ (հուսալի) տվյալների տրամադրման համար (մեկը իրավաբանական անձանց համար և մյուսը ձեռնարկատերերի համար – հնարավոր է որպես առաջնային հետաքրքրություն հանդիսանան իրավաբանական անձինք)
- Ուսումնասիրել և քննարկել նոր տվյալների տրամադրումը, եթե դրանք հետաքրքրություն են ներկայացնում

3.1.1.3. Աշխատանքը ՀՀ Արդարադատության նախարարության հետ (Ձեռնարկությունների պետական ռեգիստր)

- Քննարկել, թե ինչպես կարելի է բարելավել պետական ռեգիստրի կողմից տրամադրվող տվյալների ամբողջականությունը և որակը
- Քննարկել հիմնադիրի, տնօրենի, անվանման, հասցեի և լուծարման փոփոխությունների մասին տեղեկությունների տրամադրումը պարտադիր դարձնելու հնարավորությունները
- Ներգրավել Ոստիկանությանը այս թեմային առնչվող քննարկումներում, քանի որ Ոստիկանությունը մեծ դեր է խաղում այն դեպքերում, երբ ՀՀ ԱՎԾ-ն չի կարողանում հայտնաբերել որևէ ձեռնարկությանը տարածքային գրասենյակներում

3.1.1.4. Աշխատանքը ՀՀ Կենտրոնական բանկի հետ

- Քննարկել, թե երբ կլինի տվյալների եռամսյակային տրամադրումը

3.1.2. Նպատակը. ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում

Նախաձեռնությունները.

3.1.2.1. Դիտարկել հնարավորությունները էլեկտրոնային հաշվետվության աշխատանքներին մասնակցության համար, տես ՊԵԿ-ի << Հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման ձևաչափը >> (կայք էջ)

3.1.2.2. Նախապես լրացված տվյալների հնարավոր կիրառում

3.1.2.3. Էլեկտրոնային տվյալների տրամադրումը հնարավորություն կտա նվազեցնել նաև ստացված հաշվետվական ձևերի մշակումը:

3.2. Միայն ներքին սահմանափակումներով տարրեր

3.2.1. Նպատակը. հնարավորինս լավագույն տվյալներ ՎԲՌ-ում

Նախաձեռնությունները.

3.2.1.1. Մշակել գործիք (SS), որը կօգնի սահմանել հնարավոր սխալների/որակի խնդիրների առաջնահերթությունները, որոնք պետք է ուղղել կամ ձեռքով կամ մեխանիկական եղանակով: Հնարավոր գործիքներից կարող է հանդիսանալ ըստ NACE դասակարգիչների խմբավորումը և տարանջատումը ըստ չափերի, օրինակ շրջանառությունը և որոշել, թե որ որոշման կանոնները պետք է

կիրառվեն մեխանիկական լուծումներ տալու համար (որոշակի կանոններից ելնելով) և որոնք պետք է իրականացվեն ուղղակի եղանակով (անհատական) կոնտակտի միջոցով:
Օրինակներ խնդիրների տեսակները որոշելու համար

- Համեմատել Պետական ռեգիստրից, ՊԵԿ-ից և վիճակագրական տարբեր հետազոտություններից ստացված նույնականացման տվյալները, ներառյալ՝ ՎԲՌ-ի հետազոտությունը:
- Համեմատել ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալները շրջանառության/հասույթի և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական հետազոտությունների հետ, ներառյալ ՎԲՌ-ի հետազոտությունը:

3.2.1.2. Վերլուծել, թե արդյոք ձեռնարկությունների (և ձեռնարկատերերի) կողմից ստացված տվյալները իրականում ճիշտ են: Այս վերլուծությունները պետք է բացահայտեն սխալ տեղեկատվության պատճառները և որոշել թե ինչպես կարելի է ստանալ ճիշտ տեղեկատվություն, օրինակ վիճակագրական տվյալներ տրամադրողներին համապատասխանաբար ուսուցանելով: Փորձնական հետազոտություններ ՎԲՌ-ի հաշվետվությունների որակի վերաբերյալ:

3.2.1.3. Ուսումնասիրել հարկայինի հաշվետվական ձևերը՝ արդյոք որևէ տեղեկատվություն կարող է հետաքրքրություն ներկայացնել ՎԲՌ –ի համար, կամ այլ ճյուղային բաժինների համար- նպատակն է պատրաստել նոր կարիքների/ցանկությունների ցանկ՝ ապագայում ՊԵԿ-ի կողմից տվյալների տրամադրման համար

3.2.1.4. Ավարտել ՎԲՌ-ի հաշվետվական ձևերի վերանախագծումը (իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր) և իրականացնել փորձարկումներ և այլն

3.2.2. Նպատակը. հնարավորինս լավագույն NACE տվյալներ ՎԲՌ-ում
Նախաձեռնությունները

3.2.2.1. Ստուգել թե արդյոք փոխվել են մեծ շրջանառություն/հասույթ կամ շատ աշխատակիցների թվաքանակ ունեցող իրավաբանական միավորների NACE կոդերը թե ոչ (սահմանել ճիշտ առաջնահերթություններ)

3.2.2.2. Վերլուծել NACE խմբ. 2 դասակարգչի տարածումը ՎԲՌ-ում՝ հնգանիշ մակարդակի կոդեր տրամադրելով իրավաբանական անձանց (ձեռնարկություններին) և անհատ ձեռնարկատերերին, այն դեպքում երբ ՊԵԿ-ի կողմից վերանայված կոդերը քառանիշ մակարդակում են՝ նպատակ ունենալով ՎԲՌ-ի բոլոր ակտիվ ձեռնարկություններին և ձեռնարկատերերին տրամադրել հնգանիշ կոդեր

3.2.3. Նպատակը. նվազեցնել ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, որոնք ներգրավված են NACE դասակարգչի աշխատանքներում

Նախաձեռնությունը.

3.2.3.1. Ներկայացնել վեբ պորտալ (արտաքին նպատակների/նախաձեռնությունների հետ կապված)

3.2.3.2. Համոզվել, որ բարձր որակավորում ունեցող աշխատակիցները պետք է պատասխանեն միայն գործունեության տեսակի վերաբերյալ հատուկ/անսովոր հարցրերին

3.2.3.3. Մշակել ծրագիր NACE խմբ. 2 դասակարգիչը տարածքային գրասենյակներում առավել մանրամասնորեն ներկայացնելու համար

3.2.3.4. Ուսումնասիրել կայք էջը՝ գործիքները օգտվողի համար առավել հարմարավետ դարձնելու համար, մասնավորապես որոնման ֆունկցիայի հետ կապված

3.2.3.5. Ուսումնասիրել մանրամասն ուղեցույցները – արդյոք հնարավոր է իրականացնել որևէ բարելավումներ

3.2.4. Նպատակը. նվազեցնել տվյալների հավաքագրումների հետ կապված ծանրաբեռնվածությունը

Նախաձեռնությունը.

3.2.4.1. Էլեկտրոնային հաշվետվությունների ինքնուրույն տրամադրում ՀՀ ԱՎԾ-ին

3.2.4.2. ՎԲՌ-ի կատարելագործված կիրառումը վիճակագրական արտադրության գործընթացում

3.2.4.3. Վերլուծել բարելավված ընտրանքի և բաշխման հնարավորությունները՝ օգտագործելով կատարելագործված ՎԲՌ –ը:

3.2.4.4. ՎԲՌ հետազոտության տարեկան ընտրանքի օպտիմալացում (վիճակագրական տեղեկատվության օպտիմալացում սահմանափակ ռեսուրսների առկայությամբ (հետազոտության ընդգրկունությունը՝ 25,000 + 10,000 տարեկան ՎԲՌ հարցաթերթիկներ)): Օրինակ հարցնել փոքր միավորներին միայն յուրաքանչյուր երկու տարին մեկ (կախված է այլ աղբյուրների առկայությունից, օրինակ NACE կոդեր)

- Մշակել ընտրանքի պլան՝ ՎԲՌ-ի հետազոտությանը մասնակցելու համար
  - Վերլուծել, թե արդյոք հնարավոր կլինի ընդգրկել ամբողջ համակցությունը (բոլոր ձեռնարկություններին և ձեռնարկատերերին) որոշակի ժամանակահատվածի ընթացքում, օրինակ՝ 10 տարի: Տարբերակներից մյուսն էլ կարող է լինել փոքր իրավաբանական միավորներին յուրաքանչյուր երկու տարին մեկ ներառելու տարբերակը: (Հաշվի առնել ռիսկերը, եթե ոչ բոլոր իրավաբանական միավորներն են ընդգրկվում յուրաքանչյուր տարվա հետազոտության մեջ):

- Վերլուծել, թե ինչպես կարող է հավաքագրվել զուտ շահույթի և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը այլ ճյուղային բաժինների կողմից որոշ ձեռնարկությունների (ձեռնարկատերերի) վերաբերյալ, երբ ձեռնարկությունների խումբը ներառված չի եղել ՎԲՌ-ի հետազոտության մեջ:
- Վերլուծել, թե երբ և ինչպես առավել օպտիմալ կլինի հարցում կատարել ձեռնարկությունների և ձեռնարկատերերի շրջանում, որոնք ավելի վաղ տեղեկացրել էին ՀՀ ԱՎԾ-ին, որ իրենք ակտիվ չեն, արդյոք նրանք դեռևս մնում են ոչ ակտիվ (այսինքն այն դեպքում, երբ դրանք դեռևս Պետական Ռեգիստրում գրանցված են որպես ակտիվ)
- Նոր ձեռնարկությունները և ձեռնարկատերերը ինքնաբերաբար համակցության մեջ կլինեն – իսկ որը պետք է լինի հետազոտության մեջ դրանց ներառելու չափանիշը:
- Մշակել իրականացման ծրագիր

3.2.4.5. Ուսումնասիրել տվյալների հավաքագրման գործընթացը, ինչպես ՎԲՌ-ի հետազոտության հետ կապված, այնպես էլ այլ ճյուղային բաժինների հետազոտությունների հետ կապված
Տվյալների ընդհանուր վերաօգտագործումը

- Սխալների ընդհանուր ուղղումներ
- Ցանկացած արդիականացման ընթացակարգերի պահանջները՝ մասնավորապես բավականաչափ ռեսուրսներ
- Սա պետք է իրականացնել համագործակցելով՝ ՎԲՌ թիմի, ճյուղային բաժինների և մեթոդաբանության բաժնի հետ

3.2.5. Նպատակը. համոզվել, որ ՎԲՌ – ի համակարգը համապատասխանում է սպառողների պահանջներին:

Նախաձեռնությունները.

3.2.5.1. Առավել շատ և շատ տվյալներ են մշակվելու, ուստի ՎԲՌ-ի համակարգը պետք է մանրակրկիտ ուսումնասիրվի և վերլուծություններ պետք է իրականացվեն, թե արդյոք գործող ծրագրային ապահովումը դեռ արդիական է թե ոչ, իսկ եթե ոչ, ապա որը կլինի այն օպտիմանալ ժամանակահատվածը՝ նոր ծրագրային ապահովմանը անցնելու համար:

3.2.5.2. Արդյոք օգտակար կլինի, որ ճյուղային բաժինների աշխատակիցները առցանց մուտք ունենան ՎԲՌ-ի տվյալներին: Իսկ ինչ կարելի է ասել տարածքային գործակալությունների աշխատակիցների մասին այս առումով:

Հնարավոր աղյուսակ, որը պետք է լրացվի նկարագիր կազմելու համար

#	Նպատակը	Նախաձեռնությունը	Առաջնահերթությունը	Փոխկապակցվածությունը	Մեկնարկը
1					
2					
3					
n					